ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

19 հոկտեմբերի 2016 թվականի N 139-Ա

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև *2016 թվականի հոկտեմբերի 7-ի N 01/21.2/3926-16 գրավոր ծանուցումը*՝ **կարգադրում եմ.**

1. ***Սահակ Ժորժիկի Գրիգորյանին*** 2016 թվականի հոկտեմբերի 19-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Առինջի Ն. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2011 թվականի հոկտեմբերի 19-ին կնքված *N 22* աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի կամ առաջարկված թեկնածուի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Առինջի Ն. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել ***Սահակ Ժորժիկի Գրիգորյանին***:

3. Առաջարկել դպրոցի խորհրդին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Առինջի Ն. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար մրցույթ:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի հոկտեմբերի 19
ք. Հրազդան